



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< ----->> << ----->> 2020թ.

N -----

Հայկական ժամանակ օրաթերթին

Ի պատասխան Ձեր 25.09.2020թ. հարցմանը, տեղեկացվում է, որ 2020 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ Արմավիրի մարզի Պտղունք համայնքի տներից մեկում հրդեհ է բռնկվել: Դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ մարզային և Երևան քաղաքի փրկարար վարչության հրշեջ փրկարար ջոկատները:

Դեպքի վայրում են եղել ԱԻ նախարար Ֆ. Յուլսկյանը, ՀՀ Արմավիրի մարզպետ Հ. Մաթևոսյանը, մարզպետի տեղակալը: Այրվել է թվով 10 բնակարան: Հրշեջ փրկարարների կողմից իրականացվել է հրդեհաշիջման աշխատանքներ, ինչպես նաև գույքի տարահանում: Հրդեհը մարվել է կեսգիշերին մոտ: Հրդեհից տուժված բնակիչները գիշերը անցկացրել են իրենց հարազատների բնակարաններում:

Այսօր արդեն ՀՀ Արմավիրի մարզպետարանում կայացած քննարկման արդյունքում որոշում է կայացվել վնասված շենքի բնակիչներին ժամանակավորապես բնակության համար տրամադրել համայնքի դպրոցի շենքից մի հատված:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից հրդեհից տուժված բնակիչներին տրամադրվել է համապատասխան սնունդ:

ՀՀ Արմավիրի մարզպետարանը համայնքի տեղական ինքնակառավարման մարմնների հետ քննարկում է իրավիճակից բխող հետագա գործողությունների հարցը:

Հարգանքով՝

Հ. Մաթևոսյան

25.09.2020

VERIFIED OCSP 25.09.2020 15:08:49 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Կապ.՝ Ն. Պետրոսյան
Գ. Հովհաննիսյան

023727649